2010 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 164.1 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 170.1 մլրդ դրամ, որոնք ապահովել են ՀՀ կառավարության կողմից առաջին եռամսյակի համար հաստատված ծրագրի համապատասխանաբար 107.2 և 90.5 տոկոսը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 22.6%-ով, ծախսերի գծով՝ 19.9%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 17.4%-ով կամ 24.3 մլրդ դրամով: Ընդ որում, 19.6%-ով (25.1 մլրդ դրամով) ավելացել են հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 9.4%-ով կամ 859.1 մլն դրամով՝ այլ եկամուտները: Միևնույն ժամանակ պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը նվազել են 68.2%-ով կամ 1.7 մլրդ դրամով:

Պետական բյուջեի եկամուտների 93.4%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 6.1%-ը՝ այլ եկամուտների, 0.5%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 4.2 մլրդ դրամ:

2010 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտներն ու պետական տուրքերը կազմել են շուրջ 127.1 մլրդ դրամ և ապահովել 108% կատարողական: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 19.2%-ով կամ 20.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, եկամտահարկի և շահութահարկի աճով:

Հարկային եկամուտների ու պետական տուրքերի 49.9%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 63.5 մլրդ դրամ և 24.4%-ով կամ 12.5 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից ավելի քան 40.2 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 23.3 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Ընդ որում, մուտքերի աճ է արձանագրվել և՛ ՀՀ

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

սահմանին հարկումից, և՛ ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառությունից:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 7.5%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 9.6 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է ավելի քան 6.4 մլրդ դրամ, որից 2.7 մլրդ դրամ՝ բենզինի և դիզելային վառելիքի, 2.7 մլրդ դրամ՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 3.1 մլրդ դրամ, որից 1.5 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 3.4%-ով կամ 310.3 մլն դրամով, ընդ որում, ավելացել են ինչպես ներմուծվող, այնպես էլ հանրապետությունում արտադրվող ապրանքների հարկումից ստացվող մուտքերը:

2010 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի հարկային եկամուտների 14.8%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 18.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 18%-ով կամ 2.9 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 16.2 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 12.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 35.4%-ով կամ 4.2 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են ավելի քան 6.7 մլրդ դրամ՝ 6.4%-ով կամ 400.2 մլն դրամով գերազանցելով 2009 թվականի նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը:

2010 թվականի առաջին եռամսյակում բյուջե են մուտքագրվել ավելի քան 3.5 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով ծրագրված մուտքերի 89.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 12.5%-ով կամ 502.6 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների և հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար գանձվող տուրքերի նվազմամբ:

Գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 5.1 մլրդ դրամ՝ 1.5%-ով կամ 76.5 մլն դրամով զիջելով 2009 թվականի համապատասխան ցուցանիշը: Չնայած նշված

ցուցանիշն ընդհանուր առմամբ էական փոփոխություն չի կրել, առանձին աղբյուրներից ստացված մուտքերը դրսևորել են տարբեր վարքագիծ: Մասնավորապես՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալի աճ է գրանցվել խաղատների գործունեության կազմակերպման, հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու և դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման համար գանձվող հաստատագրված վճարների գծով: Իսկ անկում արձանագրվել է հիմնականում առևտրի իրականացման վայր կազմակերպելու, առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող՝ խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու և ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարների գծով:

2010 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 1.7 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 56.8%-ով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 2 մլրդ դրամ այլ հարկեր: Մասնավորապես՝ 147.8 մլն դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարը, 190.8 մլն դրամ՝ ռոյալթին, 505.3 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 531.1 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 8.2 մլն դրամ՝ արտոնագրային վճարները, 302.2 մլն դրամ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտման համար սահմանված տուգանքները, 13.5 մլն դրամ՝ ՀՀ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունները և 305.7 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն ավելացել է 35.9%-ով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 26.2 մլրդ դրամ՝ 18.5%-ով գերազանցելով եռամսյակային ծրագիրը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 21.6%-ով կամ 4.7 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 10 մլրդ դրամ և 105%-ով ապահովել եռամսյակային ծրագրային ցուցանիշը: Նշված

գումարից շուրջ 3.8 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների բարձր ցուցանիշով, որոնք կազմել են 3.5 մլրդ դրամ և 29%-ով գերազանցել նախատեսված ցուցանիշը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 9.4%-ով կամ 859.1 մլն դրամով: Մասնավորապես՝ բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներն աճել են 2.5 մլրդ դրամով, իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները՝ 551.5 մլն դրամով: Փոխարենը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները նվազել են 2.1 մլրդ դրամով՝ պայմանավորված նրանով, որ 2009 թվականի առաջին եռամսյակում շուրջ 2.1 մլրդ դրամ միանվագ գումար էր վճարվել ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից:

2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ստացվել են 795.6 մլն դրամի պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով նախատեսված մուտքերի 17.2%-ը: Միջոցները մուտքագրվել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար:

2010 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են շուրջ 170.1 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով եռամսյակային ծրագրի 90.5%-ը: Մասնավորապես՝ 159.1 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, շուրջ 11 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 2.2 մլրդ դրամ ծախսեր կատարվել են պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի ծախսերն ավելացել են 10.9%-ով կամ 16.7 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, դրամաշնորհների, պետական պարտքի սպասարկման և նպաստների ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 159.1 մլրդ դրամ՝ 91.6%-ով կատարելով եռամսյակային ծրագիրը: Նախորդ տարվա հունվար-մարտ ամիսների համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 7.7%-ով կամ 11.4 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 14.8 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների

աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 962.1 մլն դրամը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի համապատասխանաբար 89.3%-ը և 85.8%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատավարձի ծախսերն աճել են 6.6%-ով, իսկ սոցիալական ապահովության վճարները գրեթե չեն փոփոխվել: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը պետական բյուջեից հատկացվել է ավելի քան 28 մլրդ դրամ, որը կատարվել է 85.6%-ով և 0.8%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 6.1 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 82.6%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 4.5 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 1.6 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 72.4%-ով կամ շուրջ 2.6 մլրդ դրամով, որը մեծ մասամբ պայմանավորված է ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով: Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 3.9 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 92%-ը և 4.2%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: 20.4 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեի դրամաշնորհային ծախսերը, որից շուրջ 20 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 347.9 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին, 38.6 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների համար առաջին եռամսյակում նախատեսված միջոցներն ամբողջությամբ տրամադրվել են՝ կազմելով 8.1 մլրդ դրամ և 17.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Դրամաշնորհների եռամսյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 92.5%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 19.7%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 36.6%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 58.2 մլրդ դրամ կամ եռամսակային ծրագրի 97%-ը: Մասնավորապես՝ 43.7 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները (98.7%), 14.5 մլրդ դրամ՝ նպաստները (92.2%): 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն ավելացել են 1.2%-ով, իսկ նպաստները՝ 16.4%-ով:

2010 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի միջոցներից 26.7 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 90.5%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի

կատարումը և 6.6%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

2010 թվականի հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են շուրջ 11 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 77.4%-ը՝ նախորդ տարվա 5.7 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ 11 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 47.3%-ով գերազանցելով 2009 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 78.3 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախորդ տարվա 1.8 մլրդ դրամի դիմաց:

2010 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 6 մլրդ դրամ պակասուրդով՝ նախատեսված 34.8 մլրդ դրամի դիմաց: 2009 թվականի նույն ժամանակահատվածում պետական բյուջեն կատարվել էր 13.6 մլրդ դրամ պակասուրդով: Ընդ որում, ներքին աղբյուրներից ներգրավվել է 19.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 40.2%-ը՝ նախորդ տարվա շուրջ 23.5 մլրդ դրամի դիմաց, իսկ արտաքին աղբյուրները կազմել են -13.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը՝ նախորդ տարվա -9.9 մլրդ դրամի դիմաց:

Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 632.6 մլն դրամ են կազմել փոխառու միջոցներից (արժեթղթերից) զուտ մուտքերը, որոնք հիմնականում ապահովվել են գանձապետական պարտատոմսերի հաշվին: Մուրհակների մարման նպատակով եռամսյակային ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 96.7%-ով՝ կազմելով 12.6 մլն դրամ: Անցած ժամանակահատվածում դեֆիցիտի ներքին ֆինանսական ակտիվները կազմել են 18.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 42.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված 44.4 մլրդ դրամի փոխարեն պետական բյուջեի ազատ միջոցներից օգտագործվել է 5.9 մլրդ դրամ: 13.1 մլրդ դրամ ստացվել է տրամադրված վարկերի վերադարձից (2.2 անգամ գերազանցելով տարեկան ծրագիրը), որի հիմնական մասը վճարվել է «Հայռուսգազարդ» ԲԲԸ-ի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 175 մլն դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 77.8%-ը:

2010 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -13.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: Մասնավորապես՝ արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է 3.4 մլրդ դրամ, որից 2.4 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, շուրջ 552.9 մլն դրամ է տրամադրվել էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով

Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 444.7 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 18.8 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը: Անցած ժամանակահատվածում 8.7 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 44.8 մլն դրամի վճարում, որը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 590.3 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում 773.3 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված դրամաշնորհային միջոցների մնացորդը: